ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՕԲԵԼԵԱՆԸ

—o—

ՈՒՂԵՐՁ

(Արտասանված Օշականում տօնական հանդէսին)

—

Կովկասի հայ-աւետարանական ժողովուրդը ուրախութեամբ ընդունում է հայ տառերի գիւտի 1500-ամեայ յիշատակը տօնելու առաջարկութիւնը։

Համազգային այդ մեծ տօնը, որի համապատասխանը մինչև այսօր միայն շատ քիչ ազգեր են կարողացել տօնել, մեզ յիշեցնում է այն օրերը, երբ ս. Մեսրոպ սկսեց լուրջ կերպով զբաղվել հայ գրեր հնարելու մըտքով, և այն զօրութիւնը, որ նրան մղում էր դէպի այդ վեհ նպատակը։

Անուրանալի է, որ ս. Մեսրոպին հայ գիր ու գրականութիւն ստեղծելու միտքը ներշնչել է իր քրիստոնէական հաւատը և որ նրա ամենաառաջին նպատակը եղել է՝ տալ հայ ժողովրդին Աստուածաշունչ Ս. Գիրքը իր հասկանալի լեզուով։ Հետևապէս անուրանալի է նաև, որ մենք այսօր իսկապէս տօնում ենք քրիստոնէութեան Հայաստանում տարած մեծ յաղթանակի տօնը։

Մենք հայերս՝ տօնելով մեր ազգի մեծ լուսաւորիչների յիշատակը՝ շատ անգամ մոռանում ենք այն իսկական նպատակը, որի համար նրանք թողել են իրանց պետական պաշտօնները, կամաւ ենթարկվել են զրկանքների, հալածանքների, նեղութիւնների. մոռանում ենք, որ նրանց այդ բոլոր դժուարութիւնների մէջ հաստատ պահողը եղել է իրանց քրիստոնէական հաւատքը, յոյսը և սէրը. մոռանում ենք ձեռք առնել պէտք եղած միջոցները՝ նրանց շաւղով ընթանալու համար։

Այն մեծ պակասը, որ մենք պարտք ենք համարում մեզ այստեղ յիշել, սա է, որ այն ս. մատեանը, որի թարգմանութեան համար հնարվել են հայ գրերը, այսօր մեր մէջ մոռացութեան է տրված։ Մինչև այսօր մեր հայ ժողովուրդը չունի ս. Մեսրոպի թարգմանած Ս. Գրքի աշխարհաբար թարգմանութիւնը՝ Էջմիածնի հրատարակութեամբ։

Ուստի Կովկասի հայ աւետարանականները, շնորհաւորելով մեր այս համազգային մեծ տօնը, միևնոյն ժամանակ յոյսով սպասում են այն օրվան, երբ Էջմիածնի տպարանը կը սկսէ տպագրել աշխարհաբար Հին և Նոր Կտակարաններ՝ հայ ժողովրդի մէջ տարածելու համար։ Այդ տպագրութեան ծախքը հայ աւետարանականները խոստանում են հոգալ։

Մենք հաւատացած ենք, որ դա կը լինի

սուրբ թարգմանիչների յիշատակը արժա-
նաւորապէս տօնելու և անմոռաց պահելու
ամենալաւ կերպը։

Ներկայացուցիչ Բագուի հայ-
աւետարանական համայնքի՝
Պատուական Թառայեան
Ներկայացուցիչ Թիֆլիսի հայ-
աւետարանական համայնքի՝
Մարգար Տէր-Աստուրեան